

ԱՐԹՈՒՐ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Եվրոպական կրթական տարածաշրջանային
ակադեմիայի իրավագիտության ամբիոնի ասպիրանտ

ԵՎԳԵՆԻԿԱԿԱՆ ՓՈՐՁԵՐ.

**ՏԵՍԱԿԱՆ-ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ
ԱՄՐԱԳՐՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ՆՈՐ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՍՏԵՔՍՏՈՒՄ**

Հոդվածի շրջանակներում անդրադարձ է կատարվում եվգենիկայի վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ տրված բնորոշումներին, դրանց տեսակներին և նպատակներին: ՀՀ Սահմանադրության համապատասխան նորմերի վերլուծության հիման վրա հստակեցվում է պետության պարտականությունը կարգավորել բժշկության և կենսաբանության ոլորտներում եվգենիկական փորձերի արգելքի հետ կապված հարաբերությունները՝ հաշվի առնելով ինչպես մարդու իրավունքները կարգավորելիս ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված պահանջները, այնպես էլ Հայաստանի Հանրապետության կողմից վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:

Հիմնարաներ- ֆիզիկական անձեռնմխելիություն, եվգենիկա, անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր, մասնավոր և ընտանեկան կյանք:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության՝ (2015 թվականի փոփոխություններով) 25-րդ հոդվածով ամրագրվեց ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը, որով թեև ֆիզիկական կամ հոգեկան անձեռնմխելիությունը ներառվում է յուրաքանչյուրի անձեռնմխելիության իրավունքի բովանդակության մեջ, սակայն սահմանադիրը դա սահմանել է որպես ինքնուրույն հիմնական իրավունք՝ հստակեցնելով ոչ միայն այն նպատակները, որոնց համար կարող է նշված իրավունքը սահմանափակվել, այլ նաև այն գործողությունները, որոնք առհասարակ չպետք է տեղի ունենան:

Միաժամանակ, Սահմանադրության 25-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ բժշկության և կենսաբանության ոլորտներում մասնավորապես արգելվում են եվգենիկական փորձերը, մարդու օրգաններն ու հյուսվածքները շահույթի աղբյուր դարձնելը, մարդու վերարտադրողական կլոնավորումը:

Հարկ է նկատել, որ «եվգենիկական» եզրույթը նորույթ է ՀՀ իրավական համակարգում և ինչպես գիտական, այնպես էլ օրենսդրական մակարդակում հստակեցման կարիք ունի: Ընդ որում, սահմանադրական հիշատակված նորմը թվարկում է բժշկության և կենսաբանության ոլորտում այն գործողությունները և գործունեությունը, որոնք հենց Սահմանադրության մակարդակով արգելվում են, քանի որ պարունակում են մարդու ֆիզիկական անձեռնմխելիությանը միջամտելու մեծ վտանգներ: Եվգենիկական փորձերի արգելքն ուղղված է պետությունների կողմից համապատասխան սելեկցիոն ծրագրերի ներդրման ու իրականացման կանխարգելմանը՝ հարկադիր ստերիլացման, հարկադիր հղիության, էթնիկական ամոլսությունների, էթնիկ գտման և այլ եղանակներով:

Սույն աշխատանքի շրջանակներում կանոնադառնա՞նք «եվգենիկական փորձերը» եզրույթի տեսական-իրավական վերլուծությանը սահմանադրական նոր կարգավորումների համատեքստում: Գիտական գրականության մեջ արդեն որոշակի հարցադրումներ են արվում այդ եզրույթի առնչությամբ, մասնավորապես՝ պրոֆեսոր Ա.Ղամբարյանի կարծիքով՝ սահմանադրական նշված նորմը ՀՀ իրավական համակարգի օրակարգ է բերել, ի թիվս այլոց, հետևյալ հարցերը.

1. Մարդու իրավունքների և կենսաբժշկության մասին կոնվենցիայի (Օվիդեոյի կոնվենցիա) ստորագրման և վավերացման վերաբերյալ քննարկումները:

2. «Եվգենիկական փորձեր» սահմանադրական հասկացության ուսումնասիրություն և սահմանների հստակեցումը: Նախ՝ ՀՀ սահմանադրությամբ արգելվում է ոչ թե եվգենիկական գործունեությունն ընդհանրապես, այլ միայն փորձերը, մինչդեռ արդեն բնակչության տեսակի ընտրության մի շարք մեթոդիկաներ անցել են զուտ փորձարկման փուլը և ինքնուրույն գործունեություն են: Երկրորդ՝ տարբերակվում է բացասական եվգենիկան (կոնկրետ անձի գենետիկայի բժշկական միջամտությունը՝ նրա մոտ անբուժելի հիվանդությունները վերացնելու նպատակով) և դրական եվգենիկան (մարդու ժառանգականության բիոտեխնոլոգիական միջամտությունը՝ նրա «ցեղատեսակի» սելեկցիոն փոփոխության, լավասերման նպատակով): Բարոյագետները նշում են, որ առաջին եվգենիկան սկզբունքորեն ողջունելի է, իսկ երկրորդը՝ կասկածների և առարկությունների տեղիք է տալիս:

3. Եվգենիկայի սահմանադրական արգելքի համատեքստում ընթացիկ օրենսդրության համակարգային վերանայումը, մասնավորապես՝ «Մարդու վերարտադրողական առողջության և վերար-

www.journal.lawinstitute.am

տաղրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կամավոր բժշկական ամլացման և արհեստական (արտամարմնական/փորձանոթային) բեղմնավորման նպատակով դոնորական սերմի գատորոշման և ընտրության իրավակարգավորումների ուսումնասիրությունը և հստակեցումը: Պետք է նկատի ունենալ, որ եվգենիկայի տեսակ են մարդու ընտրությունն ըստ սեռի, ինչպես նաև՝ հիվանդ կամ սոցիալական տեսանկյունից անցանկալի «գենոֆոնդ» ունեցող մարդկանց վերարտադրման բացառումն ամլացման եղանակով:

4. Եվգենիկական փորձերը (գործունեությունը), մարդու վերարտադրողական կլոնավորումը, սպագա երեխայի սեռը պլանավորելու համար վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներ կիրառելը և բիոէթիկայի ոլորտում այլ հանրություն վտանգավոր արարքները ՀՀ քրեական օրենսգրքում որպես ինքնուրույն հանցագործություններ նախատեսելը²:

Եվգենիկա եզրույթն ստեղծվել է Ֆրենսիս Գալտոնի կողմից 1883 թվականին (հունարեն Eugenés-«տոհմական») մշակաբույսերի տեսակների և ընտանի կենդանիների ցեղատեսակների բարելավմանը, ինչպես նաև մարդու ժառանգականության պահպանմանը և կատարելագործմանն ուղղված գիտական և գործնական գործունեությունը բնորոշելու համար: Ժամանակի ընթացքում «եվգենիկա» եզրույթն սկսվեց կիրառվել մարդու հետ կապված գործունեության առնչությամբ: Տարբերակվում է նաև եվգենիկայի երկու տեսակ՝ դրական և բացասական: Դրական եվգենիկայի նպատակը հասարակության համար արժեքավոր դիտարկվող այնպիսի հատկանիշներ ունեցող անհատների վերարտադրությունն է, ինչպիսիք են բարձր ինտելեկտը և լավ ֆիզիկական զարգացածությունը կամ կենսաբանական հարմարվողականությունը: Բացասական եվգենիկան ձգտում է նվազեցնել այն անձանց վերարտադրությունը, ում կարելի է համարել մտավոր կամ ֆիզիկապես թերզարգացած կամ միջինից ցածր զարգացած³:

Եվգենիկան սովորաբար բնութագրվում է կենսաբանական եզրույթներով՝ հիմնված այն հավատի վրա, որ գիտությունը կարող է բարելավել մարդկային տեսակը դրական եվգենիկայի (խրախուսելով «համապատասխան» մարդկանց ստեղծել ընտանիքներ) կամ բացասական եվգենիկայի (խոչընդոտելով «անցանկալի» մարդկանց շատանալը) շնորհիվ: Բացասական եվգենիկան իր հերթին կարող է լինել կամ ակտիվ, կամ պասիվ: Ակտիվ բացասական եվգենիկան ներառում է հարկադիր ստերիլիզացումը, իսկ պասիվ բացասական եվգենիկան ներառում է ենթադրաբար հոգեկան կամ մտավոր խնդիրներ ունեցող անձանց կազմակերպված ձևով մեկուսացումը և նրանց անցանկալի վերարտադրության կանխումը:

Եվգենիկայի բնորոշմանը, ինչպես նաև դրա-

կան կամ բացասական եվգենիկայի նպատակներին բազմաթիվ հեղինակներ անդրադարձ կատարել են, սակայն ներկայում «եվգենիկա» եզրույթից ձգտում են խուսափել՝ որպես պատմական մռայլ հիշողությունների բացասական հետևանք:

Այսօր նոր գիտական ձեռքբերումները համադրվում են բնակչության հետ որևէ գործնական փորձեր կամ բնակչության գենոֆոնդում փոփոխություններ կատարելու քաղաքական մերժման հետ: Այս նպատակները համարվում են դատապարտելի, իսկ գործնականում հանդիսանում են անիրագործելի: Սաղմնային ցողունային բջիջների հետազոտությունների բժշկական կիրառությունը պետք է լինի հստակ ընդգծված թերապևտիկ կիրառություն, այն չպետք է լինի տրիվիալ կամ կոսմետիկ ոչ բժշկական ցանկությունների արդյունք, հատկապես հիմք եվգենիկայի հզորացման համար⁶:

Եվգենիկական սկզբունքներն այսօր մասնակիորեն իրացվում են ցանկալի կամ անցանկալի հղիությունների վերաբերյալ հանձնարարականներում: Բիոթեստավորումը հաճախ առնչվում է այն խմբի անձանց հետ, ովքեր մտնում են, այսպես կոչված, «ռիսկային խմբի» մեջ: Մեծահասակ առողջ սերունդ ունենալու հնարավորություն չունեցող անձանց սոցիալական փոխհատուցում են հանդիսանում արհեստական բեղմնավորման մեթոդները, ինչպես նաև՝ որդեգրման ինստիտուտը: Սակայն բոլոր դեպքերում որոշումները կայացվում են մարդկանց կողմից, պետության միջամտությունը նման հարցերում անընդունելի է: Ամեն դեպքում, այդ ընթացակարգերը որևէ երկրում չեն կիրառվում «մարդկային ցեղի բարելավման» նպատակով և, բարեբախտաբար, որևէ մեկի մտքով չի անցնում այն քարոզել⁷:

Եվգենիկայի հասկացության, տեսակների այս հակիրճ անդրադարձը ցույց է տալիս, որ թեև Սահմանադրությամբ բժշկության և կենսաբանության ոլորտներում եվգենիկական փորձերն արգելվում են, քանի որ դրանք միջամտում և խախտում են անձի ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքը, սակայն դեռ ՀՀ իրավական համակարգում չեն տրվել եվգենիկայի հասկացությունը, այն գործողությունների նկարագրությունը, որոնք կարող են և պետք է դիտարկվեն ու գնահատվեն որպես եվգենիկական փորձ(եր):

Սահմանադրությունը միարժեքորեն արգելում է նման փորձերը, սակայն դրա երաշխավորման պարտականությունը կրում է, առաջին հերթին, ՀՀ Ազգային Ժողովը, քանի որ նման արգելքի նպատակը ֆիզիկական անձեռնմխելիության իրավունքի երաշխավորումն է, իսկ Սահմանադրության 75-րդ հոդվածի համաձայն՝ Հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար **անհ-**

րաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր: Անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգերը և ընթացակարգերը պետք է հստակ նկարագրեն այն գործողությունների բնույթը, բնորոշ հատկանիշները, նպատակները, որոնց համակցությամբ գործողությունը կամ գործունեությունը հնարավոր կլինի գնահատել որպես եվգենիկական փորձ, ինչպես նաև՝ անհրաժեշտ է ամրագրել նման գործողություն իրականացնելու կամ գործունեություն ծավալելու արդյունքում անխուսափելիորեն վրա հասնող բացասական հետևանքները: Սահմանողությունը, որպես կանոն, չի ամրագրում այն արգելքները, որոնք պետք է ուղղված լինեն հիմնական իրավունքները ոչ իրավաչափ միջամտությունից պաշտպանելուն: Սակայն, եվգենիկական փորձերի արգելք ամրագրելով, Սահմանողությունն ընդգծում է նման վարքագծի շատ մեծ վտանգավորության աստիճանը և օրենսդրի առջև խնդիր է դնում ամրագրել արդյունավետ ընթացակարգեր, որոնցով կբացառվեն եվգենիկական փորձերի իրականացումը:

Վերոնշյալ կանոնակարգումները սահմանելիս՝ օրենսդիրը, ըստ Սահմանողության 81-րդ հոդվածի, պետք է հաշվի առնի Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:

Անհրաժեշտ է անդրադառնալ նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկային: Մասնավորապես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարան ներկայացված գանգատներից մեկում՝ դիմումատուները նշել են, որ իրենց հասանելի չի եղել հիվանդություններից զերծ սաղմ ընտրելու նպատակով նախաբեղմնավորման գենետիկական ախտորոշումը և պնդել են, որ այդ մեթոդները հասանելի են եղել այնպիսի խմբի անձանց, որին իրենք չեն պատկանում: Հենվելով Կոնվենցիայի 8-րդ հոդվածի վրա՝ դիմումատուները պնդել են, որ խախտվել է իրենց մասնավոր և ընտանեկան կյանքը հարգվելու իրավունքը, քանի որ հիվանդություններից, որոնց առողջ կրող են իրենք հանդիսանում, զերծ երեխա ունենալու միակ միջոցը բնական ճանապարհով հղիանալը և այն բժշկական հիմնավորմամբ ընդհատելն է, եթե ցանկացած ժամանակ նախածննդյան ախտորոշումը ցույց կտա, որ պտուղը հիվանդ է:

ՄԻԵԴ-ի գնահատմամբ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածը պաշտպանում է գենետիկական հիվանդություն ունեցող անձի՝ այդ հիվանդությունից զերծ երեխայով հղիանալու և վերարտադրողական տեխնոլոգիաներից ու նախաբեղմնավորման գենետիկական ախտորոշման միջոցներից օգտվելու ցանկությունը, քանի որ նման ընտրությունն իրենց մասնավոր և ընտանեկան կյանքի դրսևորման ձև է:

Այս իրավունքին միջամտությունը հիմնավորելու համար կառավարությունը վկայակոչել է «երեխայի» և կնոջ առողջությունը, բժշկական մասնագիտություն ունեցողների պատիվը և խղճի ազատությունը, եվգենիկական ընտրության ռիսկերը կանխելու շահը պաշտպանելու մտահոգությունը:

Սակայն դատարանի գնահատմամբ կառավարությունը չի կարողացել հիմնավորել, թե բժշկական հիմնավորմամբ հղիության վաղաժամկետ դադարեցումն ինչպես կարող է ազդել եվգենիկական ընտրության ռիսկերի և բժշկական մասնագիտություն ունեցողների պատվի և խղճի ազատության վրա:

Արդյունքում ՄԻԵԴ-ը գտել է, որ գենետիկական հիվանդություն ունեցող անձի՝ այդ հիվանդությունից զերծ երեխա ունենալու իրավունքը պաշտպանելու միակ հնարավորությունն այն է, որ հղիությունն սկսվի բնական միջոցներով և հետո ընդհատվի, եթե նախածննդյան հետազոտությունը ցույց կտա, որ պտուղն անառողջ է:

Այս որոշումը հիմք է հանդիսացել, որ որոշ մասնագետներ պնդեն, որ նման դիրքորոշումն ստեղծում է «վատ գենեղը չփոխանցելու իրավունք, եվգենիկայի իրավունք»:

*Մեկ այլ գործի շրջանակներում*¹⁰ դիմումատուները երկու ամուսնացած զույգեր են: Միակ ձևը, որով նրանք կարող էին երեխա ունենալ, երբ նրանցից մեկը կլիներ երեխայի գենետիկ ծնողը, էքստրակորպորալ բեղմնավորումն է (ԷԿԲ)՝ օգտագործելով դոնորի սերմնահեղուկը (առաջին դիմումատուի դեպքում) կամ ձվաբջիջները (երկրորդ դիմումատուի դեպքում): Երկու մեթոդներն էլ անօրինական են Ավստրիայի Արհեստական որդեծնության մասին օրենքի համաձայն, որն արգելում է դոնորի սերմնահեղուկի օգտագործումը ԷԿԲ եղանակով և ձվաբջիջի դոնորությունն ընդհանրապես: Օրենքն, այնուամենայնիվ, թույլ է տալիս որդեծնության աջակցության այլ մեթոդներ, մասնավորապես ԷԿԲ-ի համար միմյանց հետ ամուսնացած անձանց կամ որպես կին և ամուսին միմյանց հետ բնակվող անձանց սերմնահեղուկի և ձվաբջիջների օգտագործումը (որդեծնության հոմոլոգիական մեթոդ) և բացառիկ հանգամանքներում՝ սերմնահեղուկի դոնորությունը ներարգանդային բեղմնավորման համար: Դիմումատուները դիմել են Սահմանողական դատարան, որը վճռել է, որ տեղի է ունեցել նրանց ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքին միջամտություն, սակայն այն արդարացված է, քանի որ նպատակ ունի կանխել անսովոր ընտանեկան հարաբերությունները (երեխա և երկու մայրեր՝ մեկը կենսաբանական և մյուսը «փոխնակ» մայր) և կանանց շահագործումը: Սույն գործով ՄԻԵԴ-ն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Արհեստական որդեծնության նման նուրբ հարցում խնդրո առարկա մեթոդների հասարակական ընդունելի-

թյան կամ բարոյական նկատառումների վերաբերյալ մտահոգությունները պետք է լրջությամբ ընդունվեն: Այնուամենայնիվ, դրանք ինքնին բավարար պատճառներ չեն արհեստական որդեծնության այնպիսի հատուկ մեթոդի ամբողջական արգելման համար, ինչպիսին է ձվաբջջի դոնորությունը»:

Չնայած պայմանավորվող պետություններին ընձեռված հայեցողության լայն սահմաններին, այս նպատակով նախատեսված իրավական կառուցակարգերը պետք է հետևողականորեն մշակվեն, ինչը հնարավորություն կտա համապատասխան կերպով հաշվի առնել ներգրավված տարբեր օրինական շահերը:

Ավստրիայի օրենսդիր մարմինն ամբողջովին չի արգելել արհեստական որդեծնությունը, քանի որ այն թույլատրել է հոմոլոգ մեթոդները: Ավստրիայի օրենսդրության հիմքում ընկած է այն գաղափարը, որ բժշկական օժանդակությամբ որդեծնությունը պետք է հնարավորինս մոտ լինի բնական բեղմնավորմանը կենսաբանական և գենետիկ մայրերի միջև լայն իմաստով հնարավոր կոնֆլիկտներից խուսափելու համար: Այդ նպատակով օրենսդիրը փորձել է հավասարակշռել բժշկական օժանդակությամբ որդեծնության մատչելիության ցանկությունը և հասարակության լայն շերտերի անհանգստությունը վերարտադրողական բժշկության ներկա դերի և հնարավորությունների հետ կապված: Ավելին, Ավստրիայի օրենսդիր մարմինը հատուկ երաշխիքներ և նախազգուշական միջոցներ է սահմանել Արհեստական որդեծնության մասին օրենքում, այն է՝ արհեստական բեղմնավորման մեթոդների կիրառումը վերապահելով մասնագիտացված բժիշկներին, ովքեր հատուկ գիտելիքներ և փորձ ունեն այդ բնագավառում և կաշկանդված են իրենց մասնագիտության էթիկական կանոններով և օրենսդրորեն արգելվելով սեռական բջիջների դոնորության դիմաց փոխհատուցումը:

Այդ միջոցները նպատակ են հետապնդում կանխել եվգենիկ ընտրության պոտենցիալ սպառնալիքը և դրա չարաշահումը և կանխել խոցելի վիճակում գտնվող կանանց՝ որպես ձվաբջջիների դոնորների շահագործումը: Դատարանը որոշակիորեն կարևորում է այն փաստը, որ չկա սահմանված միասնական եվրոպական մոտեցում այն հարցին, թե արդյո՞ք ձվաբջջի դոնորությունը էԿԲ բեղմնավորման համար պետք է թույլատրվի: Ավստրիայի օրենսդրի կողմից ձվաբջջի դոնորության արգելումը, հետևաբար, համապատասխանում է 8-րդ հոդվածին: Եվս մեկ գործով՝ կառավարությունը պնդել է, որ եվգենիկական պատճառներով հղիությունը կամայականորեն ընդհատելու հարցը չի կարող բխեցվել համապատասխան բժշկական օգնություն ցուցաբերելու պետության պոզիտիվ պարտականությունից: ՄԻԵԴ-ն այս գործով ընդգծել է, որ պտղի առողջության վերաբերյալ

ամբողջական և հավաստի տեղեկատվության հասանելիությունը կարևոր է ոչ միայն հղի կնոջ հարմարավետության համար, այլ նաև անհրաժեշտ նախապայման է հղիության վաղաժամկետ ընդհատման օրենքով թույլատրված հնարավորության համար: Պետությունը, գործելով հայեցողության շրջանակներում, ընդունում է որոշ դեպքերում հղիության վաղաժամկետ ընդհատումը թույլատրող օրենսդրական կարգավորումներ, սակայն դրանք չպետք է լինեն այնպիսին, որ գրկեն դրանից օգտվելու հնարավորությունից: Մասնավորապես՝ պետությունը կրում է պոզիտիվ պարտականություն սահմանելու այնպիսի ընթացակարգ, որը հնարավորություն կտա հղի կնոջն իրացնելու հղիության օրինական վաղաժամկետ ընդհատման իր իրավունքը:

Վերոգրյալի հիման վրա կարելի է եզրակացնել, որ.

1. Եվգենիկայի վերաբերյալ միասնական ընկալումներ և ձևակերպումներ առկա չեն ո՛չ ՀՀ օրենսդրության մեջ, ո՛չ այլ երկրների օրենսդրություններում կամ միջազգային իրավական փաստաթղթերում, թեև ՄԻԵԴ-ի որոշումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տարբեր երկրների կառավարությունները տարբեր գործընթացները դիտարկում են որպես եվգենիկա, սակայն ՄԻԵԴ-ն այլ կարծիք ունի դրանց վերաբերյալ:

2. Սահմանադրությամբ ամրագրված եվգենիկական փորձերի արգելքը երաշխավորելու համար անհրաժեշտ է օրենսդրությամբ հստակ ամրագրել այն գործողությունները կամ գործունեությունը, որը պետք է դիտարկվի որպես եվգենիկական փորձ՝ հստակեցնելով դրանց ոչ միայն բովանդակությունը, այլ նաև դրանց նպատակը:

3. Օրենսդրական կարգավորումներ ամրագրելիս անհրաժեշտ է նաև հաշվի առնել այն հանգամանքը, թե մման գործողությունները կամ գործունեությունն ինչ առնչություն ունեն Սահմանադրությամբ ամրագրված այլ հիմնական իրավունքների հետ:

4. Սահմանադրությամբ նախատեսված պահանջի կատարումը երաշխավորելու նպատակով անհրաժեշտ է համապատասխան իրավունքի ճյուղերի նորմերով սահմանել պատասխանատվություն եվգենիկական փորձերի համար:

5. Օրենսդրության մեջ բժշկության և կենսաբանության ոլորտներում եվգենիկական փորձերի արգելքն ամրագրելիս անհրաժեշտ է նաև հաշվի առնել ՄԻԵԴ-ի իրավական դիրքորոշումները Կոնվենցիայով ամրագրված մարդու իրավունքների վերաբերյալ, որոնց հետ որևէ առնչություն ունի եվգենիկական:

¹ Պողոսյան Վ, Սարգսյան Ն., Հայաստանի Հանրապետության 2015 թ. Խնդրագրությամբ Սահմանադրությունը.

Համառոտ պարզաբանումներ: Երևան, Տիգրան Մեծ, 2016, էջ. 48-49:

² Գամբարյան Ա.Ս., Իրավագիտության և քիմիկայի զարգացման հեռանկարները 21-րդ դարում. Բիոիրավունքի համակարգը // «Կենսաբժշկության բարոյաիրավական հիմնախնդիրները» խորագրով հանրապետական գիտական կոնֆերանսի նյութերի ժողովածու, Երևան, 2016, էջ. 10-28 էջ. 17-18:

³ Энциклопедия Кругосвет, Универсальная научно-популярная онлайн-энциклопедия,

http://www.krugosvet.ru/enc/nauka_i_tehnika/biologiya/EVGENIKA.html?page=0,0#part-2, 15.10.2017.

⁴ University of Lethbridge, Eugenics to Newgenics website, <https://eugenicsnewgenics.com/key-terms/>, accessed on 10.10.2017.

⁵ Дорохов В. ЕВГЕНИКА – ЗАПРЕЩЕННАЯ НАУКА, "Аналитическая газета "Секретные исследования",

<http://www.secret-r.net/arkhiv-publikatsij/34-2015/evgenika-zapreshchennaya-nauka>, 11.10.2017թ.:

⁶ Alexander McCall Smith and Michel Revel, The Use of Embryonic Stem Cells In Therapeutic Research. Report of the IBC on the ethical aspects of human embryonic stem cell research, Paris, 6 April 2001,

<http://unesdoc.unesco.org/images/0013/001322/132287e.pdf>, p. 12, accessed on 11.10.2017.

⁷ Розанов В. А. Биология человека и основы генетики: Учебное пособие для студентов- психологов. - Издание 2-е, исправленное и дополненное. - Одесса: ВМВ, 2012, с 37.

⁸ CASE OF COSTA AND PAVAN v. ITALY, Application no. 54270/10, FINAL JUDGMENT 11.02.2013,

<http://hudoc.echr.coe.int/eng?i=001-112993>, accessed on 11.10.2017.

⁹ Hilary White, European court ruling creates 'right to eugenics'//LifeSite, <https://www.lifesitenews.com/news/european-court-ruling-creates-right-to-eugenics>, published on 31.08.2012թ. accessed on 11.10.2017.

¹⁰ Տ.Ն. և այլոք ընդդեմ Ավստրիայի - 57813/00, Վճիռ 3.11.2011թ. [ԳՀ], թարգմանությունն իրականացվել է Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հավաստարձագրային ֆոնդի (www.coe.int/humanrightstrustfund) աջակցությամբ, հասանելի է հետևյալ էլեկտրոնային հասցեում՝ <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-122586>, սուտքի ամսաթիվ 11.10.2017թ.:

¹¹ CASE OF R.R. v. POLAND, (Application no. 27617/04), FINAL JUDGMENT 28/11/2011,

<http://hudoc.echr.coe.int/eng?i=001-104911>, accessed on 11.10.2017.

Արտուր Նապետյան

Аспирант юридической кафедры Европейской региональной образовательной академии

РЕЗИОМЕ

Евгенические эксперименты. теоретико-правовой анализ и некоторые проблемы правового закрепления в контексте конституционных новых поправок

В рамках статьи рассматриваются определения, типы и цели евгеники, приведенные в литературе. Основываясь на анализе соответствующих норм Конституции РА, проясняется обязательство государства регулировать отношения, связанные с запретом евгенических опытов в области медицины и биологии, учитывая при этом требования, установленные Конституцией РА в области регулирования прав человека, и практикой органов, действующих на основе международных договоров о правах человека, ратифицированных РА.

Ключевые слова: физическая неприкосновенность, евгеника, необходимые организационные механизмы и процедуры, частная и семейная жизнь.

Artur Nahapetyan

PhD student at the Law Department at European Regional Educational Academy

SUMMARY

Eugenic experiments. theoretical-legal analysis and some issues on legal attachment in the context of constitutional new regulations

In this article, the author discusses definitions, types and purposes of eugenics considered in the academic literature. Analysing relevant constitutional provisions, he clarifies the obligation of the state to regulate relations related to the ban of eugenic practices in the field of medicine and biology taking into account the requirements established by the Constitution of RA in the field of human rights and the practices of bodies acting on the basis of the international human rights treaties ratified by the RA.

Keywords: physical integrity, eugenics, necessary organisational mechanisms and procedures, private and family life.